

ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ԵՐԵԿՎԱ

ՀԱՅԱՑՔՆ ՈՒ ՄԵՐ ԱՅՍՕՐԸ

«Ով որ լսելու ականջ ունի, թող լսի»^{1*}

Բանալի բառեր – Հրանտ Մաթևոսյան, «Ես ես եմ», Հայաստան, հայրենիք, Հովհաննես Թումանյան, հարցազրույց, «Ծանհի՛ր զքեզ», պետություն, երկիր, մենք:

Հոդվածի առանցքում Հրանտ Մաթևոսյանի «Ես ես եմ» ժողովածուում ամփոփված երկու տասնյակից ավելի տարիների հարցազրույցների հետահայաց ուսումնասիրությունն է, որի նպատակն է քննել մեր երկրի երեկն ու այսօրը, նաև վաղը, բացբացել մեր արատները, վերլուծել մեր բացթողումները և վերականգնել մեր երբեմնի անվտանգ, բարգավաճ ու առաջադեմ իրականությունը՝ հենվելով արդեն ասված խոսքի ենթատեքստի և ուղիղ տեքստի, ինչպես նաև մեր երկրի ու աշխարհի այսօրվա ավելի լայն համատեքստի համապարփակ քննության վրա:

Տկարությունը մարդու մարմինն ու հոգին, միտքն ու սիրտն ու ժասպառ անելու անպետք զորություն ունի, տկարությունը մարդու տունն ու երկիրը տանուլ տալու, ամլացնելու ահարկու կարողություն ունի: Մի օր, երբ մեր երկիրը ավելի քան տասը տարվա մաքառումից հետո (2000 թվականին) կարծես թե հաղթահարել էր իրեն պատած հազար ու մի տկարություն, իրեն պատուհասած հազար ու մի աղետ ու արհավիրք, կարծես թե կամաց-կամաց ապաքինվում էր անբուժելի թվացող խոցերից ու ախտերից, Հրանտ Մաթևոսյանը սպասելի ա-

1 Նոր կտակարան, Ավետարան ըստ Մարկոսի, գլուխ 9, արևելահայերեն թարգմանություն, Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1981, էջ 102:

* Հոդվածն ընդունվել է տպագրության 26.08.2022:

ՎԷՄ համահայկական հանդես, ԺՂ (Ի) տարի, թիվ 3 (79), հուլիս-սեպտեմբեր, 2

նակնկալ խոստովանեց. «Տկար եմ»: Դահլիճում ներկաներից շատերին էր ուղղված խոսքը, ես լսողներից մեկը եղա: Եվ քանի որ «Մերմնացանի առակի մեկնությունը» վարանելու տեղ չի թողնում («Նա, որ սերմանում է, խօսքն է սերմանում»²), պարզ էր, որ մարդու նրա մարմինը տկարության նշաններ էր ուղարկել մտքին՝ վկայելու սրտի և հոգու տագնապները, որոնք խոսքի տիրույթում ահագանգում էին իր երկրի այդ օրը խժռողների ու վաղվա հույսը մսխողների ապիկար ներկայությունը բոլորիս կյանքում:

Եվ քանի որ «Մերմնացանի առակը» ցուցանում է՝ «Ով որ լսելու ականջ ունի, թող լսի», Հր. Մաթևոսյանն ի սկզբանե (1990 թվականին) «լսել» էր նորանկախ ու ինքնիշխան երկրի ուրախության, բայց և տկարության կանչը, և ոչ միայն «ականջ ունեւր ու լսել էր», այլև երկրի սահմանապահի աչալրջութամբ ու պատասխանատւութամբ գորել էր արդար լինել ու զգոնութան կոչնակ հնչեցնել, տագնապել էր ու տագնապը չէր թաքցրել, տեսել էր իրականութան դեմքը և մեզ էր պարզել եղած ճշմարտութունը դեռ 1992 թվականին. «Դուք կարող եք ամենավերջին բառերն ասել խորհրդային շրջանի հասցեին, ամենասև գոյներով նկարագրել մեր ժողովրդի կյանքն այդ ընթացքում, դա ձեր գործն է, ձեր իրավունքն է, սակայն մի՛ սոռացեք, որ հենց այդ տարիներին են ստեղծվել հայ մշակույթի, արվեստի ու գրականութան գագաթնային շատ արժեքներ: Իսկ այժմ մենք հայտնվել ենք միանգամայն անբնական վիճակում, վտանգված են մեր կյանքի բոլոր ոլորտները՝ և՛ սոցիալականը, և՛ տնտեսականը, և՛ քաղաքականը, և՛ մշակութայինը... Վտանգված է մեր գենոֆոնդը, ինչպես նաև տարածքի այս փոքրիկ բեկորը, որը կոչվում է Հայաստան: Ինձ մտահոգում ու մտատանջում են բազմաթիվ հարցեր, հարցեր, որոնք ես կուզեի հասցեագրել մեր կառավարութանը, մեր նախագահին՝ Լևոն Տեր-Պետրոսյանին: Ես կտամ նրանց այդ հարցերը, բայց միայն այն ժամանակ, երբ ինքս ունենամ դրանց պատասխանները»³:

Եթե այս խոսքի ամրագրման տարեթիվը գրեթե երեսուն տարով այս կողմ բերենք ու դարձնենք 2021 և նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի անունն էլ փոխարինենք մերօրյա «կառավարչի» անունով, ապա միանգամայն ձգգրիտ կհնչի Հր. Մաթևոսյանի մտահոգութունը ամեն-

2 Նույն տեղում:

3 **Մաթևոսյան Հր. Իգ.**, ժողովուրդը կզտնի ճշմարիտ ուղին, գրույցը՝ Գուրգեն Կարապետյանի, «Ուրբաթ», 30.10.1992, «Ես ես եմ», հարցազրույցներ, Եր., «Ոսկան Երևանցի» հրատ., 2005, էջ 76:

քի՛ս ներկայի ու ապագայի համար. «Վտանգված է մեր գենոֆոնդը, ինչպես նաև տարածքի այս փոքրիկ բեկորը, որը կոչվում է Հայաստան»։ Մտահոգությունը կհնչի, որպեսզի գոնե հիմա իբրև առաջնահերթ հրամայական որոնենք այն պատասխանները, որոնք գրողը հաստատապես որոշել էր ի՛նքը գտնել, որոշել էր, քանի որ հարցեր ուներ, բազմաթիվ հարցեր՝ մեկը մյուսից կենսական ու հրատապ, ճակատագրական ու բախտորոշ երկրի համար, ազգի համար ու պետության, սակայն, ցավոք, առ այսօր այդ հարցերը դեռ հնչում են անպատասխան։ Այո՛, անպատասխան, որքան էլ Հր. Մաթևոսյանը ինքն իրենից ու աշխարհից խռով մի պահի զայրույթով բռնկվեր ու խոստովաներ. «Ինչո՞ւ ես ինձ զազրախոսության հրապուրում։ Հարցերիդ պատասխանը չգիտեմ, գիտեմ՝ չեմ տալիս»⁴։ Եվ զայրույթի միջից կարծես լավում է խրատը, թե միշտ չէ և ամեն իմացած չէ, որ պետք է հնչեցնել որպես պատասխան, քանի որ, ո՞վ գիտի, գուցե չասածը, գուցե լռությամբ ասածը ավելի շուտ տեղ հասնի, քան տիրող աղմուկ-աղաղակի մեջ մի ավելորդ ձայն, մի անպագոգոգոռ հոխորտանք նետելն ու քարկոծելը, հատկապես որ լռողը հենց նա էր լինելու, որի խոսքին բոլորը, գրեթե բոլորն էին սպասում, անգամ չսպասողները, որի լռությունն ավելի խոսուն էր, քան բազում ճառասացների այպանումը, որի լռությունը հենց պատասխան էր։ Ո՞վ գիտի։

Եվ ահա այսօր արդեն ուշացած ու վախվորած, իր «եզրով» անցնելու պես առերեսվում ենք նրա իսկ հարցերին. «Կարողանալո՞ւ ենք մենք՝ թերիներս, ես՝ թերիս, նրա (Հովհաննես Թումանյանի – Դ. Հ.) օրինակով, մեր անցյալն ու ապագան մեզ առագաստ անել և դառնալ և մնալ հայոց մեր կայսրության քաղաքացիները... Տա Աստված՝ կորցրած լինենք միայն իրեն, տա Աստված՝ իր հետ չկորցնենք նաև արքայական խոսքի, արքայավայել գործի մեր զորությունը, տա Աստված՝ չդառնանք արդեն ինքնին գանգատավոր, ինքնին ապստամբ, ինքնին ստրուկ»⁵։

Ինքը, այո՛, կարողացավ. հենց Թումանյանի օրինակով ինքը առագաստի պես բարձրացրեց մեր երեկն ու այսօրը, ինքը պահպանեց «արքայական խոսքի, արքայավայել գործի մեր զորությունը», իսկ մե՞նք, մենք կարողացա՞նք չդառնալ «գանգատավոր և ապստամբ և

4 Մաթևոսյան Հր., Աշխարհի վերջը չէ (Գրողը պատասխանում է խմբագրի հարցերին), գրույցը՝ Ֆելիքս Մելոյանի, «Գրական թերթ», 01.01.1991, «Ես ես եմ», էջ 45։

5 Նույն տեղում, էջ 42։

ստրուկ», մենք կարողանալո՞ւ ենք շարունակել մեր անխտոր ընթացքը, երբ ժամանակներն այսքան անառագաստ են, երբ ժամանակը բոլորովին էլ առագաստ պարզողինը չէ: Անկեղծորեն ասեմ՝ չգիտեմ: Եվ դարձյալ վարանում, մոայլատես կասկածներ, ինքնակեղեքման չափ հոգեմաշ փնտրտուք: Եվ երեք տասնամյակ հեռու մեր օրերում դարձյալ նույն հարցն է հառնում, գուցե հարցերի հարցը. «Ուրիշ անգամներ, հազարիցս, մտածել եմ, թե մենք մեր խաղը չենք խաղում, մեր կյանքով չենք ապրում, մեր ճանապարհով չենք գնում, թե մեր այս շքերթանման թափորի կամ թափորանման շքերթի գլխին բռնել ենք ոչ մեր աստծու պատկերը, և այլն, բայց ահա այս է իրականությունը, ուրիշ իրականություն չկա: **Մենք կարո՞ղ էինք չխաղալ այս խաղը, կարո՞ղ էինք այլ կյանքով ապրել, այլ ճանապարհով գնալ, այլ աստծու պատկերով առաջնորդվել.... Այս է (ընդգծումը մերն է – Դ. Հ.)**»⁶:

Խոսքի կիսատությունը, թերասաց տրտմությունը թերևս ամենից լավ են բացբացում չինչած պատասխանի տողարանքը՝ կարո՞ղ էինք, չէինք կարող, ուրեմն անկարող էինք, ուրեմն այս է: Բայց, միևնույն է, երբ վտանգված է գլխավորը, երբ մեր հավաքական կամքն ու վճիռը մեկտեղելու անհրաժեշտությունը մեզ մոռացնել է տալիս, թե ամեն մեկս ինչ թերություն և առավելություն ունենք, թե մենք ո՞վ ենք և որտեղ ենք առանձին-առանձին, թե որն է անհատապես իմ ու քո առաքելությունը կյանքի այս ափին, հենց այդժամ է, որ ամենասուր զգացողությամբ գլխի ես ընկնում, որ ամենահետին մտքով ինքդ քեզ սպառնում ու մատ ես թափ տալիս. «Ծանի՛ր գքեզ»:

Եվ լինում է այնպես, որ ինքդ քեզ, քո ինքնությունը, քո երեսի աջն ու ձախը որոնելիս, քեզ ճանաչելու ամենօրյա կովի մեջ, ամենօրյա պարտության հետևանքով, ամբարվող թշնամության պատճառով այնքան ես հեռանում քեզնից, քո արմատից, քո բնից, անգամ ճյուղն ու տերևն ես պռճկում, անխնա ոտնատակ տալիս, որ «Ծանի՛ր գքեզ»-ը, փրկօղակ լինելու փոխարեն, անեծք է դառնում, դառնում է ճակատագիր, որից ուզում ես կանովին հրաժարվել, ուզում ես սիրով նվիրել այլոց, միայն թե քեզ չճանաչես, քո ուղնուծուծը չիմանաս, քո տան դուռը ներսից բացողին միս ու արյունով չտեսնես, չլսես, չնզովես ու չխղճաս, քանի որ այդպես քեզ ես տեսնում, լսում, նզովում ու

6 Նույն տեղում, էջ 43-44:

խղճում: Ուրեմն հույսդ ինչի՞ վրա դնես, ո՞ւմ վրա դնես, եթե ամեն բան այսպես ու այսչափ ավերվել է ու ոչնչացել, ի՞նչ անես, եթե թևաթափ ես, եթե սև մորեխը հա գալիս է ու գալիս: Եվ ահա Հր. Մաթևոսյանն անսկատ հայտնվում է մեր թիկունքում՝ ապսպրելով առագաստը ձիգ ու ամուր պահել. «Այս հայրենիքը բոլորինս է, և բոլորս ենք նրա պաշտպանը, և բոլորս գիտենք, որ նրա անկումը անկումն է բոլորիս՝ հարուստներիս և աղքատներիս, ձրիակներիս և մշակներիս... և նրա կյանքը մեր հավերժությունն է (ընդգծումը մերն է – Դ. Հ.)»⁷:

Եվ ասված է, ու ասեմ. «Ով որ լսելու ականջ ունի, թող լսի»: Լսենք առանձին-առանձին, լսենք բոլորով, լսենք մեր միջի լսողին:

Թե որ լսենք, բոլորս դեմքով կդառնանք դեպի «այս հայրենիքը», որ սիրենք, գուրգուրենք ու պաշտպանենք իրեն, որ անկում չլինի, որ անկում չապրենք, որ նրա գոյությունը մեր հավերժության երաշխիքը լինի, որ լինենք իրենով ու իր հետ. թե որ չլսենք, սուսկումով եմ բառը բառի, միտքը մտքի քով բերում, չեմ բերում, հրաժարվում եմ բերել: Լսե՛նք:

Ժամանակները ոչ միայն իրար հաջորդելու, այլև իրար կրկնելու հոռի սովորություն ունեն, և այս ամենի մեջ մեզ՝ բանական արարածներիս, անարգողը ոչ այնքան կրկնվողի աչք ծակող կանխատեսելին է, որքան կրկնվողից դաս չքաղելու մեր ապիկար պնդաճակատությունը, որքան կրկնվողից խույս չտալու մեր ձախորդ ծուլությունը, ավելին՝ որքան կրկնվողն ի շահ մեզ ու մերոնց չծռելու մեր կարճամիտ անհեռատեսությունը կամ անխելք անկարողությունը:

Հիմա մենք որտե՞ղ էինք լինելու, ի՞նչ բարիք էինք ստեղծելու, ինչպե՞ս էինք մեր բոլորի սերը վահան դարձնելու և դիմակայելու անխուսափելի աղետներիս, ինչպե՞ս էինք ծաղկեցնելու մեր երկիրը, եթե չլինեին մեր ներքին գզվռտոցը, մեր շինծու, անբարո ու մարդակեր քաղաքական տուրուղմփոցը, մեր իշխանավորի աչքածակությունն ու ազահ որկորը, մեր մուրացիկի կոկորդիլոսի արցունքն ու խեղճի, ոտնահարվածի նենգությունը, եթե ոչ թե ուժեղ օտարին մեր գլխին տեր կարգեինք, այլ դաշնակից փնտրեինք ու դաշն ապրեինք, եթե մեր միտքը, արհեստն ու արվեստը, մեր կարողությունն ու հարստությունը մե՛զ ծառայեցնեինք, այլ ոչ թե մեր կամքով ուրիշի բանակին զինվո-

7 Նույն տեղում, էջ 45:

րագրվեինք, ուրիշի կամքին հլու՝ որպես ծառա և ստրուկ ապրեինք: Հիմա մենք ինչպիսի՞ երկիր էինք ունենալու, եթե ամեն անգամվա պես մենք մեզ չդավեինք կամ եթե գոնե մեկ անգամ մեր ընդհանուրի շահը վեր դասեինք մեր անձնական, կուսակցական, խմբակային ու թայֆայական շահից, հիմա մեր պետությունը ինչպիսի՞ն էր լինելու. հյուծված, պարտված և հուսաբե՞կ, թե՞ առողջ, ուժեղ, հաղթական և հույսով լի: Եվ լսվում է պատասխանը, որ դառնորեն հնչել է գրեթե երեսուն տարվա հեռուներում, որ հնչել ու մեզ զգուշացրել է սպասվող արհավիրքի մասին, որ ձիգ է արել մեզ փրկելու մեզնից, որ տեսել է մեզ գրեթե նույն բացերով, թերացումներով ու ճակատագրական սխալներով, գրեթե նույն մտավախություններն աչքի առաջ ունենալով, որոնք մեզ համառորեն ուղեկցում են ժամանակներ ի վեր՝ մեզ դեմ տալով այս անդամալի կորուստներին ու «հայոց վշտին»։ ողբերգական մի վիճակ, որում ապրում ենք այսօր. «Պետությունը միայն բանակով է կայանում... Բայց իրականում ոչ մի բան չենք անում, իրականում մենք դավաճանում ենք մեր ազգին»⁸: Իրականում սա **մահազանգ** էր, սթափության կոչ էր, հորդոր էր, հայրական ապտակ էր, որդիական ընդվզում էր ու գրողի բացաչք դիտողություն, հայի, մարդու, իր երկրի արժանավոր քաղաքացու սուրականջ լսողություն էր ու տագնապի ազդանշան:

Այդպես էր, և սա այն դեպքում, երբ այն օրերի բանակը՝ զինվոր ու հրամանատար, սպա ու գեներալ, թեպետ ոչ ըստ պատշաճի զինված, ոչ անհրաժեշտ սաղավարտ ու զրահաբաճկոն հագին, մի կուշտ փոր հացի կարոտ, բայց, միևնույն է, հանուն իր տան ու հայրենիքի ելավ կենաց–մահու կռիվ տալու, ելավ իբրև կամավոր, իբրև մահապարտ, կռվեց ու հաղթեց, պաշտպանեց հող հայրենին, բայց ցավ է, մեծ ցավ է, որ հետո՝ հաղթանակից օրեր անց, եղավ այն, ինչի մասին ահազանգել էր Հր. Մաթևոսյանը. «...մենք դավաճանում ենք մեր ազգին», երբ այդ նույն կռվողը՝ նույն զինվորը, անտեր մնաց՝ իր սայլակին գամված, իր անտուն ու անգործ կյանքն անիմաստ մսխելով, հրապարակներում ու շուկաներում օրվա հացը մուրալով, անտեսված ու դավաճանված իշխանավորի, կառավարչի ու նոր տերերի ճարպիկ ձեռամբ ու կամքով:

8 **Մաթևոսյան Հր.**, ...Որ էս երկիրը երկիր դառնա, գրույցը՝ Վանուշ Շերմազանյանի, «Հայաստանի Հանրապետություն», 20-21.08.1992, «Ես ես եմ», էջ 48:

«Բայց էլի վազում ենք Տիգրան, էլի վազում ենք Մոսկվա, էլի վազում ենք... Մենք մեզ պիտի կարգավորենք, մեր գնդերը կարգավորենք, մեզ իրականության առջև կանգնեցնենք, հետո, մեր ներսում անձնավորված, մեր հանրապետության ներսում պատրաստ լինելուց հետո դիմենք հարևան և մյուս հանրապետություններին... Մենք իսկապես պիտի պատրաստ լինենք (ընդգծումը մերն է – Դ. Հ.)»⁹:

Չլսեցինք, պատրաստ չեղանք, «**մենք մեզ չկարգավորեցինք**» և այսքան տարի անց դարձյալ կանգնեցինք կոտրած տաշտակի առաջ: Չուզեցինք, թե՞ չզորեցինք լսել: Երկուսն էլ մեղք են, երբ խորհուրդը գալիս էր «կարգավորելու» մեր ներսն ու դուրսը, մեր երկիրն ու հայրենիքը, գալիս էր արժանապատվորեն մատնացույց անելու մեր ժողովրդի ու ազգի գոյատևելու ուղին, ի վերջո գալիս էր մեզ վերադարձնելու մեզ, ճանապարհ ու ելք էր հուշում, բանալի էր պարզում, որը մեր հույսի դուռն էր բացելու. «Մեր իրականությանը պիտի տեր կանգնենք: ...Մենք ուղղակի պիտի փակվենք և մեր խոսքը գտնենք, մեր խոսքին համապատասխան մեր վարքն ունենանք իրողության առաջ: ...Իսկ իրողությունը... Պատերազմի նոր կերպ է պարտադրվել մեզ: **Սա Հայաստանի՝ Կովկասում մնալ-չմնալու հարցն է: Հարցն այսպես է դրված: Եթե մենք ուզում ենք լինել Կովկասի իրավահավասար ազգերից մեկը, մենք պարտավոր ենք չպարտվել, պարտվելու իրավունք չունենք և պիտի չպարտվենք** (ընդգծումը մերն է – Դ. Հ.)»¹⁰:

Մի անգամ չպարտվեցինք, այդ անգամ հաղթեցինք, բայց հաղթանակը փայել-փայփայելու, ամրապնդելու և պաշտպանելու, հաղթանակին տեր կանգնելու կարիքը կար, ու պարտքը կար, հաղթանակը կայուն ու հարատև խաղաղության վերածելու անհրաժեշտությունը կար, որ մեր զավակների կյանքի գնով ձեռք բերած այդ հաղթանակը մեր դրոշի պես տիրաբար փողփողար մեր երկրի անվտանգ ու ապահով բարձունքներում: Չարեցինք: Հիմա ումի՞ց ենք ի՛նչ պահանջում, հիմա մենք մեզսից պիտի պահանջենք, մենք մեզ պիտի հաղթենք, մեզ պիտի դատենք ու դատապարտենք, թե չէ երեք տասնամյակ առաջ էլ նույն ջաղացն էր, և նույն ջուրն էր հոսում. «**Եթե հաշտեցման**

9 Նույն տեղում:

10 Նույն տեղում, էջ 49:

փրկիչ խոսքը Մոսկվայից էր գալու, թե Անկարայից էր գալու, երկու դեպքում էլ նույնն էր լինելու: Անկարան բացարձակապես չէր կովելու, այլ Ադրբեջանին՝ իր օժանդակությամբ արձակելու էր Հայաստանի վրա: Մոսկվան էլ կացուկամ իր խոստումներով ժողովուրդներին կովեցնելու էր: Այս պայմաններում ի՞նչ ենք անելու: ...Այստեղ ուղղակի դրված է ազգ և ազգ հարցը (ընդգծումը մերն է – Դ. Հ.)»¹¹:

Լսո՞ւմ ենք, ականջ ունե՞նք, որ լսենք:

«...Հայրենիքը չի կարելի տալ: Պիտի բոլորս մեկ լինենք, և այստեղ այլևս փիլիսոփայություն կամ այլ վարժանքներ պետք չեն (ընդգծումը մերն է – Դ. Հ.)»¹²:

Պարտավոր ենք լսել:

Դիանա Հ. Համբարձումյան – ԲՊՀ պրոֆեսոր, ունի շուրջ 60 գիտական աշխատանքներ, այդ թվում՝ 2 մենագրություն, 2 բուհական դասագիրք, 1 հոդվածների ժողովածու: Զբաղվում է գրականագիտական, լեզվաբանական, թարգմանաբանական և նշանագիտական խնդիրների ուսումնասիրությամբ: Հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է գրականագիտությունը, լեզվաբանությունը, թարգմանաբանությունը, նշանագիտությունն ու դրանց փոխկապակցված, ընդհանրական խնդիրները:

Էլ. հասցե՝ dianna_hambardzumyan@yahoo.com

¹¹ Նույն տեղում, էջ 49-50:

¹² Նույն տեղում, էջ 51:

HRANT MATEVOSYAN'S YESTERDAY'S VIEW AND OUR TODAY

“Whoever Has Ears to Hear, Let Them Listen”

Diana H. Hambardzumyan
Doctor of Sciences in Philology

Keywords - Hrant Matevosyan, *I Am Who I Am*, Armenia, homeland, Hovhannes Tumanyan, interview, “Know yourself”, state, country, us.

The main topic of the present article “Hrant Matevosyan’s Yesterday’s View And Our Today” (“Whoever Has Ears to Hear, Let Them Listen”) is a retrospective study of Hrant Matevosyan’s collection *I Am Who I Am* that includes the writer’s interviews given over more than two decades before his death.

The article aims at examining and summarizing all the difficulties and hindrances having risen before our nation during the previous three decades that Hr. Matevosyan had fairly and sincerely emphasized in his interviews. In a loving and caring tone talking about our country’s yesterday and today, even tomorrow, he revealed and analyzed our shortcomings, searched for the ways of restoring the security, the prosperous and progressive reality we once had. Based on the comprehensive examination of the direct text said by Hr. Matevosyan, this paper unearths the essence of his thoughts in a broader context of our country and the whole world at present.

We need to conclude: “Times are in the habit of not only following each other but repeating each other as well, and in all of this truth, what is disgraceful to all of us – to rational creatures, is not so much the eye-popping predictability of the repetition, as our abject insistence on not learning a lesson from all kinds of repeated tragedies of all times, as our failing laziness of not avoiding the repetition, more than that – as our short-minded improvidence or foolish inability of not being able to bend the repetitive to our advantage.”

ВЧЕРАШНИЙ ВЗГЛЯД ГРАНТА МАТЕВОСЯНА И НАШЕ СЕГОДНЯ

«Имеющий уши слышать да слышит»

Диана Г. Амбарцумян
Доктор филологич. наук

Ключевые слова - Грант Матевосян, «Я есть я», Армения, родина, Ованес Туманян, интервью, «Познай себя», государство, страна, мы.

Основной темой настоящей статьи является ретроспективное исследование сборника статей Гранта Матевосяна «Я есть я», в который вошли интервью писателя, данные им более чем за два десятилетия до смерти. Статья направлена на изучение и обобщение всех трудностей и препятствий, вставших перед нашей нацией на протяжении предыдущих трех десятилетий, на которых Гр. Матевосян делал акцент в своих интервью, честно и искренне, в любящем и заботливом тоне, говоря о вчерашнем и сегодняшнем, даже завтрашнем дне нашей страны, выявляя и анализируя наши недостатки, ища пути восстановления нашей некогда благополучной, процветающей и прогрессивной реальности. При проведении исследования мы детально рассмотрели контекст сказанного Гр. Матевосяном, проанализировали суть его прямого текста как такового и более широкого контекста о нашей стране и о всем мире в настоящее время.

Нами был сделан вывод: «Времена имеют обыкновение не только следовать друг за другом, но и повторять друг друга, и во всей этой истине позорным для всех нас – для разумных существ, является не столько предсказуемость повторения, сколько наша жалкая настойчивость в том, чтобы не извлечь урока из всевозможных повторяющихся трагедий всех времен, наша несостоятельная лень не избежать повторения, более того – наша недалновидная непредусмотрительность или глупая неспособность не быть в состоянии согнуть повторяющиеся в нашу пользу».

REFERENCES

1. **Mat'evosyan Hr. Ig.**, Yes yes em, harts'azruyts'ner, Yer., "Voskan Yerevants'i" hrat., 2005 (**In Armenian**).
2. Nor ktakaran, Avetaran ěst Markosi, arevelahayeren t'argmanut'yun, Ĕjmiatsin, "Mayr At'oř Surb Ĕjmiatsin", 1981 (**In Armenian**).